ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/12

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Ինտերօրթո» ՍՊԸ-ի կողմից 29.01.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/12 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ինտերօրթո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ինտերօրթո» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված 29.01.2018թ. բողոքով հայտնել է, որ «ԱՍՀՆ-ԲՄԾՁԲ-18/1-Պ» ծածկագրով բաց մրցույթի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 22.01.2018թ. թիվ 3 արձանագրության 3-րդ 1-ին կետի համաձայն՝ Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն, «Բարրի» ՍՊԸ-ն, «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն և «Ինտերօրթո» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ 1-5-րդ, 8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն, 6-7-րդ չափաբաժինների մասով՝ «Բարրի» ՍՊԸ-ն, 9-12-րդ, 14-15-րդ, 17-րդ, 23-րդ, 34-րդ չափաբաժինների մասով՝ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն, 13-րդ, 16-րդ, 18-22-րդ, 25-33-րդ չափաբաժինների մասով՝ «Ինտերօրթո» ՍՊԸ-ն:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի 22.01.2018թ. թիվ 4 արձանագրության «ա» ենթակետը կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) և Ընթացակարգի հրավերի պահանջների խախտմամբ, հետևաբար այն ենթակա է փոփոխման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հրավերի 7.2 կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, եթե՝

ա. մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավել չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե ըստ

չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 70 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա ապահովումը կարող է ներկայացվել միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընկերությունը հայտնել է, որ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ուսումնասիրությունից երևում է, որ գնային առաջարկի հանրագումարը կազմում է 275 573 300 ՀՀ դրամ:

Ընթացակարգի 17-րդ չափաբանի մասով «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն ներկայացրել է 156 595 300 ՀՀ դրամ գնային առաջարկ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջարկվող գինը գերազանցում է 70 մլն. ՀՀ դրամը՝ մասնակցի կողմից որպես հայտի ապահովում ներկայացվել է թիվ 16305-66-550 երաշխիքը: Համաձայն ներկայացված երաշխիքի՝ երաշխիքի գումարը կազմում է 10 000 000 ՀՀ դրամ, իսկ 156 595 300 ՀՀ դրամի 5 տոկոսը կազմում է 7 829 765 ՀՀ դրամ:

Մնացած չափաբաժիններով «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն ներկայացրել է 118 978 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որի մասով որպես հայտի ապահովում ներկայացրել է տուժանքի մասին հայտարարություն և 13 800 000 ՀՀ դրամի վճարման պահանջագիր, սակայն 118 978 000 ՀՀ դրամի 5 տոկոսը կազմում է 5 948 900 ՀՀ դրամ:

Ընկերությունը նշել է նաև, որ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերի պահանջների խախտմամբ, հետևաբար այն պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր, սակայն դրան հակառակ գնահատող հանձնաժողովը խախտումներով ներկայացված հայտը գնահատել է բավարար և որոշ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 46-48-րդ և 50-րդ հոդվածների դրույթներով՝ «Ինտերօրթո» ՍՊԸ-ն խորհրդին խնդրել է պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում:

«Ինտերօրթ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.02.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 02.02.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/972-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԱՍՀՆ-ԲՄԾՁԲ-18/1-Պ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկ ներկայացվել է թվով 4 ընկերությունների, այդ թվում՝ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ կողմից:

«Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից իր գնային առաջարկով 70մլն. ՀՀ դրամը գերազանցող չափաբաժինների մասով հայտի ապահովումը ներկայացվել է բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում՝ բանկային երաշխիքով սահմանված գումարը գերազանցել է հրավերով սահմանված, հայտի ապահովման համար պահանջվող, գնային առաջարկի 5 տոկոսը: 70մլն. ՀՀ դրամը չգերազանցող չափաբաժինների համար «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումը ներկայացվել է միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնագրի ձևով: Ընդ որում՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարը նույնպես գերազանցել է հրավերով սահմանված հայտի ապահովման համար պահանջվող գնային առաջարկի 5 տոկոսը:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերը, որոշել է բավարար գնահատել «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի գնման հայտը, քանի որ մասնակցի կողմից հայտի ապահովման գումարը 5 տոկոսից ավել սահմանելը որևէ կերպ չի կարող պատվիրատուի համար խոչընդոտ հանդիսանալ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում անհրաժեշտ չափով այդ հայտի ապահովման կիրառման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն գտնում է, որ «Ինտերօրթ» ՍՊԸ-ի բողոքն իրավաչափ չէ և ենթակա է մերժման:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.02.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՍՀՆ-ԲՄԾՁԲ-18/1-Պ» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակցիների հայտ է ներկայացրել «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն:

2. «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի 17-րդ չափաբաժնի մասով ընդհանուր գինը կազմել է 156 595 300 ՀՀ դրամ:

3. «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն գնային առաջարկի 17-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է հայտի ապահովում բանկային երաշխիքի ձևով, որի չափը կազմում է 10 000 000 ՀՀ դրամ:

4. «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված 9-15-րդ, 20-23-րդ, 26-28-րդ, 34-րդ չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարը կազմել է 118 978 000 ՀՀ դրամ:

5. «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն գնային առաջարկի 9-15-րդ, 20-23-րդ, 26-28-րդ, 34-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է հայտի ապահովում՝ միակողմանի հաստատած տուժանքի մասին համաձայնագրի տեսքով, որի չափը կազմում է 13 800 000 ՀՀ դրամ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետով կայացված որոշմամբ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 9-12-րդ, 14-15-րդ, 17-րդ, 23-րդ, 34-րդ չափաբաժինների մասով:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կազմակերպությունը վերոհիշյալ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, որի ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ինտերօրթո» ՍՊԸ-ի 29.01.2018թ. բողոքը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 02.02.2018թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/972-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների: Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավելի չափաբաժինների համար, ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ՝ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա ապահովումը կարող է ներկայացվել միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների

ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՍՀՆ-ԲՄԾՁԲ-18/1-Պ» ծածկագրով բաց մրցույթը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ***հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:***

Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Նույն կետի 7.2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, եթե՝ մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավել չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 70 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա ապահովումը կարող է ներկայացվել միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 9-15-րդ, 17-րդ, 20-23-րդ, 26-28-րդ, 34-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն:

Կազմակերպության կողմից Ընթացակարգի 17-րդ չափաբաժնի մասով ներկայացվել է 156 595 300 ՀՀ դրամ գնային առաջարկ:

Միևնույն ժամանակ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն հիշյալ չափաբաժնի մասով ներկայացրել է հայտի ապահովում բանկային երաշխիքի ձևով, որի չափը կազմում է 10 000 000 ՀՀ դրամ:

Մյուս չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկների հանրագումարի մասով, որի չափը կազմում է 118 978 000 ՀՀ դրամ, Կազմակերպությունը ներկայացրել է

հայտի ապահովում միակողմանի հաստատած տուժանքի մասին համաձայնագրի տեսքով, որի չափը կազմում է 13 800 000 << դրամ:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը՝ միակողմանի հաստատած տուժանքի մասին համաձայնագրի և բանկային երաշխիքի տեսքով, գտնում է, որ դրանք չեն համապատասխանում հրավերի պահանջներին հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես, Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը սահմանում է, որ հայտի ապահովման չափը հավասար է հայտով ***առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ***հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:***

Նույն հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: ***Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Խորհուրդն արձանագրում է, որ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 17-րդ չափաբաժնի համար ներկայացված հայտի ապահովման չափը, որը տվյալ դեպքում կազմում է 10 000 000 << դրամ, գերազանցում է Կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկի (156 595 300 << դրամ) հինգ տոկոսը, քանի որ նշված չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է 7 829 765 << դրամ (156 595 300*5%=7 829 765):

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Կազմակերպության կողմից Ընթացակարգի 9-15-րդ, 20-23-րդ, 26-28-րդ, 34-րդ չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի (118 978 000 << դրամ) մասով ներկայացված հայտի ապահովման չափը, որը կազմում է 13 800 000 << դրամ, նույնպես գերազանցում է նշված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի հինգ տոկոսը, քանի որ նշված չափաբաժինների գնային

առաջարկների հանրագումարի հինգ տոկոսը կազմում է 5 948 900 ՀՀ դրամ (118 978 000*5=5 948 900):

Այսպիսով՝ խորհուրդը գտնում է, որ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից «ԱՍՀՆ-ԲՄԾՁԲ-18/1-Պ» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ չի բավարարում գնային առաջարկի հինգ տոկոսի չափով ներկայացված լինելու պահանջը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին, և Կարգի 41-րդ կետի համաձայն այն ենթակա չէ շտկման, ուստի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ կետի, ինչպես նաև Հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում վերջինիս հայտը ենթակա էր մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խորհուրդը գտնում է, որ «Ինտերօրթո» ՍՊԸ-ի 29.01.2018թ. բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ինտերօրթո» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 29.01.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՍՀՆ-ԲՄԾՁԲ-18/1-Պ» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**